Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2019թ. նոյեմբերի 25-27-ը, Դանիայի Թագավորություն, Կոպենհագեն

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

2019թ. սեպտեմբերի 16-19-ը Կոպենհագենում կայացած ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի 69-րդ նստաշրջանի շրջանակներում ընտրվել եմ ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի մշտական կոմիտեի (այսուհետ՝ Մշտական կոմիտե) անդամ:

Այցի նպատակն էր մասնակցել 27-րդ Մշտական կոմիտեի երկրորդ նստաշրջանին, որպես Մշտական կոմիտեի անդամ:

6. Քննարկված թեմաները.

Մշտական կոմիտեի նիստի շրջանակներում Դանիական կողմը ներկայացրեց առողջապահական համակարգի իրենց մոդելը, ռազմավարությունն ու հիմնական ուղղությունները, բարեփոխումներն ու ծրագրերը, ինչպես նաև առողջապահական ոլորտի ֆինանսավորման ուղղությունները:

Տեղի ունեցան քննարկումներ ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի ռազմավարական ղեկավարման արդյունավետության բարձրացման և նոր տարրերի ներգրավման շուրջ:

Քննարկվեցին նաև ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի 70-րդ նստաշրջանի նախնական ծրագրին և օրակարգին առնչվող ռազմավարական և տեխնիկական հարցեր, որի շրջանակներում հնչեցվեցին հայկական կողմի՝ նախապես պաշտոնական նամակագրության միջոցով իրենց ներկայացված առաջարկները՝ 70-րդ նստաշրջանի օրակարգում ներառելու նպատակով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Անդրադարձ կատարվեց նաև ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային կոմիտեի 69-րդ նստաշրջանի աշխատանքներին և արդյունքներին:

Քննարկվեցին Մշտական կոմիտեի ենթակոմիտիների աշխատանքների կազմակերպական և ռազմավարական հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ԱՀԿ անդամ պետությունների ներկայացուցիչները ջանքեր են ներդնելու ստանձնած բանավոր պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

02 դեկտեմբերի, 2019թ.